ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՅՈՒՄՐՈՒ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

Թեմա՝ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

Առարկա՝ Պատմություն

Ուսուցչուհի՝ Աիդա Հովհաննիսյան

Ղեկավար՝ Արմեն Հայրապետյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ժամանակակից տեխնոլոգիաները և դրանց կիրառումը պատմության դասին.....5

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Խորհրդային Հայաստանի մշակույթը հետպատերազմյան տարիներին թեմայի դասավանդումը.....11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....20

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....21

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետպատերազմյան շրջանում, հատկապես անհատի պաշտամունքի քննադատությունից հետո, նոր հորիզոններ բացվեցին ազգային մշակույթի զարգացման համար: Դեռևս պատերազմի ծանր օրերին ստեղծված Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան, միավորելով հանրապետության գիտահետազոտական ինստիտուտները, նոր թափ էր հաղորդում դրանց զարգացմանը: Զարգացում ապրեց կրթությունը, գիտությունը, թատրոնը, կերպարվեստը, երաժշտությունը, ճարտարապետությունն ու կինոարվեստը:

1950-1980-ական թվականներին հայկական մշակույթի բոլոր ճյուղերը որակական նոր փուլ էին թևակոխել: Խորհրդային Հայաստանի մշակույթը արժանի ներդրում էր կատարում համաշխարհային մշակույթի գանձարանում:

Թեմայի արդիականությունը: «Հետպատերազմյան շրջանի մշակույթը» թեման արդիական է նրանով, որ Ներկայիս Հայաստանի Հանրապետության մշակութային կերպարը մեծապես ժառանգված է Խորհրդային Հայաստանից: Եվ չնայած պետական քաղաքականությանը, որի նպատակն էր մշակույթի բոլոր բնագավառները ծառայեցնել կոմունիստական քարոզչությանը, մշակույթը զարթոնք ապրեց և դարձավ ապագա սերունդների հարուստ ժառանգությունը:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները:

Աշխատանքի նպատակն է՝ ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով հանրակրթական դպրոցում սովորող աշակերտներին ներկայացնել Խորհրդային Հայաստանի մշակույթը հետպատերազմյան տարիներին :

Աշխատանքի խնդիրներն են՝

1) Ուսումնասիրել ժամանակակից տեխնոլոգիաների տեսակները և փորձել դրանք կիրառելով դասն առավել արդյունավետ դարձնել,
2) Ուսումնասիրել աշակերտների հետ մշակույթի հին ու նոր ճյուղերը և դրանց ազդեցությունը հասարակության վրա,
3) Ծանոթանալ տվյալ շրջանի նշանավոր մշակութային գործիչների և նրանց հայտնի գործերի հետ՝ օգտվելով ժամանակից տեխնոլոգիաներից:

Ուսումնասիրության առարկան: Ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը «Խորհրդային Հայաստանի մշակույթը հետպատերազմյան տարիներին» թեման ուսումնասիրելու համար: Նշենք ,որ հիմնականում շեշտը դրել ենք երեք ուղղությունների վրա՝արվեստ, կինո-թատրոն, երաժշտություն:

Աշխատանքի ընթացքում կիրառել ենք՝ ցուցադրության, վերլուծության, քննարկման , համակարգման ***մեթոդները***:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածությունում հիմնավորվում են թեմայի արդիականությունը, ձևակերպվել են նպատակները և խնդիրները, նշված են մեթոդները:

Առաջին գլխում ներկայացրել ենք ժամանակակից տեխնոլոգիաները և դրանց կիրառումը պատմության դասին, ինչպես նաև դրանց դերն ու նշանակությունը:

Երկրորդ գլխում օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաներ՝ ուսումնասիրել ենք Խորհրդային Հայաստանի հետպատերազմյան շրջանի մշակույթի գործիչներին և նրանց մեծ նշանակություն ունեցող գործերը:

Եզրակացության մեջ ամփոփելով ներկայացրել ենք կատարված ուսումնասիրության արդյունքները:

Օգտագործված գրականության տեսություն: Աշխատանքում օգտագործել ենք մեթոդական գրքեր, ձեռնարկներ, ակադեմիական գրականություն, դասագրքեր, հոդվածներ և համացանցային աղբյուրներ :

Կարելի է առանձնացնել Ն. Նիկուլինայի[1], Տ. Գլազիրինայի[2] մեթոդական աշխատությունները, ինչպես նաև Հ. Սիմոնյանի բուհական դասագիրքը[3]:Քանի որ ներառում են կարևոր տեղեկություններ թեմայի ուսումնասիրման վերաբերյալ:

---

[1] Никулина Н.Ю., Методика преподавания истории в средней школе: Учебное пособие, Калинингр. ун-т., Калининград, 2000.

[2] Глазырина Т.Н., Методика преподавания истории: учеб.-метод. комплекс для студентов специальности История, ПГУ, Новополоцк, 2011.

[3] Հայոց պատմություն, Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը Մ.Ա. Կատվալյան, Պ.Հ. Հովհաննիսյան, Է. Գ. Մինասյան, Բուհական դասագիրք, խմբ.՝ Հ. Սիմոնյան, ԵՊՀ հրատ., Երևան, 2012:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումն այսօր արմատապես փոխել է մարդկային կյանքը կրթության, արդյունաբերության, առևտրի, գիտության, մշակույթի և այլ ոլորտներում՝ խթանելով նորարարություններ և ստեղծելով նոր որակ ու մակարդակ:

Արդի մշտափոփոխ և արագ զարգացող պայմաններում բարձրագույն կրթության համակարգը պետք է կարողանա համընթաց քայլել ժամանակի պահանջներին եւ վերազինվել աշխատանքային նոր եղանակներով:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը կրթական գործընթացում ժամանակակից դպրոցական կրթության հրատապ խնդիր է: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները դառնում են ուսուցիչների մասնագիտական մշակույթի անհրաժեշտ բաղադրիչը: Ուսումնասիրելով և վերլուծելով տեղեկատվության տարբեր աղբյուրներ, աշակերտները սովորում են նպատակներ դնել, պլանավորել ակնկալվող արդյունքը և,ինչը կարևոր է, նրանք առաջարկում են ճանաչողական խնդրի հնարավոր լուծումներ: Այսօր դպրոցական ցանկացած առարկայի գրեթե յուրաքանչյուր ուսուցիչ կարող է պատրաստել և անցկացնել դաս՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաների ընձեռնած հնարավորությունները: Դրանց օգտագործմամբ դասը տեսողական, գունագեղ, տեղեկատվական, ինտերակտիվ է, խնայում է ուսուցչի և աշակերտի ժամանակը, թույլ է տալիս աշակերտներին աշխատել իրենց տեմպերով, ուսուցիչին թույլ է տալիս աշխատել աշակերտի հետ տարբեր և անհատական, հնարավորություն է տալիս արագորեն հետևել և գնահատել ուսումնառության արդյունքները[4]: Ինտերնետից տեղեկատվության օգտագործման առավելություններից մեկն այն է, որ ծանրության կենտրոնը տեղափոխվում է պատմության դասավանդման բանավոր մեթոդներից որոնման և ստեղծագործական գործունեության մեթոդները:

[4] Никулина Н. Ю., с. 59- 60.

Դպրոցում ուսուցման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը հնարավորություն է տալիս ակտիվացնելու սովորողների ճանաչողական և մտավոր գործունեությունը, նաև դասի ժամանակ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը աշակերտին տալիս է ուսուցման մոտիվացիայի բարձրացում, նպատակ դնելու կարողության զարգացում:

Կրթության կարևոր խնդիրներից մեկն անձի ստեղծագործական կարողությունների զարգացումն է: Ստեղծագործական զարգացման համար կարող ենք նաև օգտվել տեխնոլոգիական միջոցներից: Համակարգչային ծրագրերը սովորողներին առաջարկում են ուսումնասիրվող դասընթացի գրաֆիկական և տեքստային որոշ կողմեր, էլեկտրոնային աղյուսակներ:Այդ ծրագրային միջոցների հնարավորություններն այնպիսին են, որ առաջադրանքների խելամիտ ընտրության, պարապմունքների ընթացքում ստեղծագործական մթնոլորտի ձևավորման դեպքում դրանք օգնում են սովորողների մեջ զարգացնել երևակայությունը, ստեղծագործական ներըմբռնումը, նախաձեռնությունը, այսինքն՝ մասնագիտական հետագա գործունեության համար անձնային կարևոր հատկանիշներ[5]:

Պատմության դասավանդման մեջ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը շատ նպատակահարմար է և արդյունավետ: Հատկապես մշակույթի թեմաներն ուսումնասիրելիս կարելի օգտվել մի շարք տեխնոլոգիաներից, որոնք ոչ միայն դասարանի ուշադրությունը կգրավեն այլև հետաքրքրասիրությունը կշարժեն:

Տեղեկատվական տեխնոլոգիաները և համակարգիչները կարևոր տեղ են զբաղեցնում ուսումնական գործընթացում՝ ընձեռելով նոր հնարավորություններ ուսուցիչներին և սովորողներին: Պատմության դասերի ժամանակ Համակարգիչը կարող է օգնել մեզ դասը ավելի հետաքրքիր անցկացնել: ժամանակակից համակարգիչները թույլ են տալիս ինտեգրվել տեքստեր, գրաֆիկա, ձայն, անիմացիա, տեսահոլովակներ, բարձրորակ լուսանկարներ, բավականին մեծ քանակությամբ ամբողջ էկրանով տեսանյութեր, որոնց որակը չի զիջում հեռուստատեսությանը և քանի որ գրեթե բոլոր դպրոցներն ունեն համակարգչային լսարաններ կարելի է

[5] Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները կրթության մեջ https://bit.ly/3efiOWN (Առցանց հասանելի է 06.05.2020):

համակարգչով միասին ուսումնասիրել մշակույթի գործերը, համեմատել այլ աշխատանքների հետ , վերլուծել դրանք և քննարկել դասարանով[6]:

Համակարգչային ծրագրերից կարող ենք օգտվել powerpoint ծրագրից,այն հնարավորություն է տալիս տեսնել աշակերտների զեկույցները, որոնք կարող են մոտիվացնել ու պահել նրանց հետաքրքրության մեջ: *Սլայդներ* պատրաստելիս աշակերտները ինքնուրույն աշխատանք են կատարում , նրանց մոտ զարգանում է փնտրելու, գտնելու, համակարգելու կարողությունը, ինչպես նաև դրական է ազդում ճանաչողական ակտիվության վրա:

Կարող ենք օգտագործել նաև ցուցահանդես կատարելու տարբերակը: Աշակերտներին հանձնարարել պատրաստել ցուցահանդես մշակութային մի թեմա հանձնարարելով, այնուհետև միասին յուրաքանչյուր նկարի մասին զրուցել, կարծիքներ հայտնել ու կատարել եզրահանգում: Բացի ինքնուրույն ցուցահանդես կազմակերպելուց կարող ենք նաև համակարգչով միանալ մեզ հետաքրքրող որևէ *վիրտուալ ցուցահանդեսի*, որը մեզ հնարավորություն կտա ծանոթանալ նորաստեղծ կերպարվեստի գործերին , նոր մարդկանց աշխատանքներին , ինչպես նաև կարող ենք դիտել մեզ հետաքրքրող շրջանի մշակույթի գլուխգործոցները:

Հայաստանի ազգային պատկերասրահի ցուցասրահներում ներկայացված հավաքածուն ընդհանուր պատկերացում է տալիս ազգային կերպարվեստի և դեկորատիվ-կիրառական արվեստի պատմության մասին, ինչպես նաև ներկայացնում է արտասահմանյան երկրների արվեստը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Առաջիկայում պատկերասրահի ֆեյսբուքյան էջով կտարածվեն մի շարք ֆիլմեր և ռեպորտաժներ, որոնք մինչ այս պահը հասանելի չեն եղել լայն հանրությանը: Բացի այդ, մյուս տարի լրանում է նաև Հայաստանի ազգային պատկերասրահի հիմնադրման 100-ամյակը, որի շրջանակներում պատկերասրահը սկսում է «#100-ամյա պատմություն» խորագրով առցանց նախագիծ:[7] Սա ևս հրաշալի առիթ կդառնա դասարանի հետ միասին միանալ և հետևել ինչպես նաև անցկացնել հետաքրքիր դաս:

Նշենք, որ վերջին տարիներին մեծ դեր են սկսել խաղալ *վիրտուալ էքսկուրսիաները*:

---

[6] Глазырина Т. Н., с. 156-157.

[7] Այցելություններ/ցուցահանդեսներ https://bit.ly/37JJYCX (Առցանց հասանելի է 06.05.2020):

Վիրտուալ էքսկուրսիաների ժամանակ աշակերտների մոտ մեծ դեր է խաղում որոնողական մեթոդը: Աշակերտները ոչ միայն ծանոթանում են ցուցանմուշների,այլև զբաղվում են ակտիվ պատմական ինֆորմացիայի փնտրտուքով: Դրան հասնում են էքսկուրսիայից առաջ խնդրահարույց հարցերի առաջադրման ճանապարհով կամ ստանալով որոշակի ստեղծագործական առաջադրանքներ: Վիրտուալ էքսկուրսիան թույլ կտա անցկացնել էքսկուրսիա հենց տեղում, նաև կշահագրգռի երեխաներին մասնակցել դիտել ու անպայման բաց չթողնել դասը , որը նրանց համար նորի բացահայտում կդառնա:

Ինչպես նաև հասանելի է BBC Earth-ի վիդեոների ֆորմատով 6 հետաքրքրաշարժ տեսանյութեր: Այդ թվում նաև երեխաների համար նախատեսված էքսկուրսիաներ, որոնք վարում են «Sesame Street» ուսուցողական ծրագրի կերպարները[8]:

Պատմության դասի ժամանակ շատ կարևոր են թանգարանային արցելությունները, որոնք կարող ենք իրականացնել համակարգչով, հեռախոսով, պլանշետով և այլ միջոցներով: Ժամանակակից տեղեկատվական դարաշրջանում, երբ օրեցօր զարգանում են տեղեկատվական միջոցները, մշակութային հաստատությունները նույնպես գտնում եմ նորագույն միջոցներ՝ այցելուներին և հասարակությանն առավել հասանելի լինելու և նոր մոտեցումներ առաջարկելու համար: Այսօր արդիական են *վիրտուալ էքսկուրսիաները* տուն-թանգարաններ: Այն հարմար և մատչելի միջոց է հայտնվել մեկ դասի շրջանակներում մի քանի թանգարաններ և միասին հետաքրքիր դաս անցկացնել:

Հայաստանի պատմության թանգարանը երկրի ամենախոշոր թանգարաններից մեկն է: Պատմության թանգարանը այցելուներին հնարավորություն է տալիս կայքի պաշտոնական էջում առցանց տարբերակով շրջել թանգարանի ցուցասրահներում, իսկ «360 stories» ցանցը հնարավորություն է տալիս շրջել միայն թանգարանի նախասրահում[9]:

Գրականության և արվեստի թանգարանը ևս «360 stories» ցանցում ունի վիրտուալ այցելության հնարավորություն: Շատ լավ հնարավորություն կա անցկացնել դաս՝ օգտագործելով միջառարկայական կապեր գրականության հետ: Այս կայքի շնորհիվ հնարավոր է տեսնել թանգարանի մշտական ցուցադրությունը, որը նե-

[8] Վիրտուալ էքսկուրսիաներ https://bit.ly/3dlwcaZ (Առցանց հասանելի է 06.05.2020):
[9] Վիրտուալ շրջայցեր https://bit.ly/2YeOLcz (Առցանց հասանելի է 06.05.2020):

բառում է հայ գրողների կյանքին և գործունեությանը վերաբերող բազմաթիվ ցուցանմուշներ, հայկական մշակույթին և արվեստի առանձին ճյուղերին վերաբերող ցուցասրահներ:

Կարևորագույն դեր ունեն նաև *պատմական ֆիլմերի դիտումները:* Դրանք կարող են լինել ուսումնական ֆիլմեր, փաստավավերագրական ֆիլմեր, դիաֆիլմեր և գեղարվեստական ֆիլմեր: Ուսումնական ֆիլմերը իրենց հերթին լինում են՝.

- Ամբողջական ֆիլմեր, որոնք նվիրված են լինում որևէ մեծ թեմայի և բաժանված են լինում մի քանի մասերի
- Հատվածային ֆիլմեր- ցուցադրում են որևէ թեմայի իրար հետ կապված հատվածներ
- Միկրոֆիլմ-կինոհատվածներ- Ցույց է տալիս որևէ երևույթ կամ փաստ և տևում է 3-5 րոպե
- Կինոօղակներ- օղակաձև կապված մեծ ժապավեններ են, որոնց մեծ մասը «համր» է:

Պատմության դասի ժամանակ ուսուցչին օգտակար կարող է լինել նաև *Պատմական հեռուստահաղորդումները:* Դրանք թույլ են տալիս ցուցադրել և ներկայացնել այն, ինչ ուսուցիչը չի կարող անել դասերի ընթացքում:

Սովորական ֆիլմերից բացի նշանակություն ունեն *ուսումնական դիաֆիլմերը:* Դրանք են՝ դիաֆիլմ-ակնարկը, հատվածային դիաֆիլմը, բացատրական դիաֆիլմը, դիաֆիլմ-մեկնաբանությունը, տեքստ-դիաֆիլմը, դիաֆիլմ-իրավիճակը, գեղարվեստական ստեղծագործության էկրանացումը և այլն: Սրանք շատ հարմար են նոր նյութի հաղորդման ժամանակ[10]:

Պատմության դասի արդյունավետությանը նպաստում են նաև *էլեկտրոնային գրատախտակները (*այնտեղ կարելի է նախապես ներբեռնել նկարներ, ֆիլմեր, գործողություններ, որոնք իդեալական են դասավանդողների համար*), էլեկտրոնային գրադարաններն ու հանրագիտարանները:* Համացանցում կան մի քանի կայքէջեր, որոնք հնարավորություն են տալիս ուսուցիչներին և աշակերտներին ուսումնասիրել հանրագիտարանային և գրքային նյութեր օրինակ նման էջերից է http://www.encyclopedia.ru/, http://www.nla.am/arm/?q=hy և այլն:

---

[10] Ղևոնդյան Հ., Պատմության դասավանդման մեթոդիկա, Մանկավարժ հրատ., Երևան, 2001, էջ 232-233:

Այսօր կարևոր են *Վիկտորինաները* ,որոնք բազի գրավորից և բանավորից կարելի է կազմել օնլայն տարբերակով: Օրինակ հետաքրքիր խաղ-վիկտորինանե-րից է join a quizizz, որն ունի թեստային բնույթ , տրվում է մի քանի վարկյան յուրա-քանչյուր հարցին. և ճիշտ պատասխանի համար գրանցում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԵՏՊԱՏԵ-ՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ

«Խորհրդային Հայաստանի մշակույթը հետպատերազմյան տարիներին» թեման աշակերտներ ըստ կրթական ծրագրի ուսումնասիրում են 9-րդ դասարանում:

Առաջին գլխում խոսեցինք ժամանակակից տեխնոլոգիաների և պատմության դասին դրանց կիրառման մասին: Այժմ այդ մեթոդների միջոցով կփորձենք թեման ավելի հետաքրքիր և հասանելի ներկայացնել աշակերտներին:

Հետպատերազմյան տարիներին, երբ անհատի պաշտամունքը քննադատության ենթարկվեց, որոշակիորեն աշխուժացավ Հայաստանի հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը: Հենց այս ժամանակահատվածում հայ ժողովուրդը մեծագույն զարթոնք ապրեց՝ երևան եկան մի շարք գործիչներ առանց որոնց անհնար է պատկերացնել մեր մշակութային առաջընթացը[11]:

Մեր դպրոցներում այսօր ուսուցիչների կարևորագույն խնդիրն է հնարավորինս լավ և մատչելի ներկայացնել աշակերտներին մեր մշակութային գործիչներին և գլուխգործոցներին: Ուսուցիչներին օգնության են հասնում ժամանակակից տեխնոլոգիաները ավելի վառ ու պատկերավոր դարձնելով դասը: Սկսենք մեր դասի մասին խոսել: Կրթություն և գիտություն թեմաները կարելի է ավելի մատչելի ներկայացնել սլայդների միջոցով: Սլայդով կարող ենք ներկայացնել ցանկացած մշակութային թեմա և կսկսենք խոսել կրթության, գիտության և գրականության մասին փորձելով ցույց տալ մշակութային ձեռքբերումները այս բնագավառներում:

Կրթությունը և գիտությունը: Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո կրթության ասպարեզում նկատելի տեղաշարժեր կատարվեցին: Որոշակի առաջընթաց կատարվեց նաև բարձրագույն կրթության ոլորտում: Գիտությունների ակադեմիայի առաջին նախագահ Հովսեփ Օրբելիին 1947թ. փոխարինեց աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանը:

[11] Հայոց պատմություն, Նորագույն ժամանակաշրջան (1945-1991թթ.), խմբ. Վ. Բարխուդարյան և ուրիշ., Հ. 4, Գիրք II, Զանգակ հրատ., Երևան, 2016, էջ 313 -314:

Զարգացան արտադրության միանգամայն նոր ճյուղեր՝ կիբեռնետիկան, ռադիոտեխնիկական և էլեկտրոնային արտադրությունը: Նշանակալի հաջողություններ ձեռք բերվեցին քիմիական և կենսաբանական գիտությունների ասպարեզում:

Գրականությունը: Գրական ասպարեզ եկան գրողների մի նոր սերունդ, որը թարմ շունչ բերեց: Համաժողովրդական սիրո արժանացան Հովհաննես Շիրազը, Համո Սահյանը, Գևորգ Էմինը, Պարույր Սևակը, Սիլվա Կապուտիկյանը, Սերո Խանզադյանը, Վահագն Դավթյանը և ուրիշներ[12]: Իրենց ուղին էին շարունակում մեծագույն դեմքեր Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Ստեփան Զորյանը, Նաիրի Զարյանը, Հրաչյա Քոչարը և այլք: 1960-70-ականներին գրականություն մուտք գործեցին Հրանտ Մաթևոսյանը, Վարդգես Պետրոսյանը , Ռազմիկ Դավոյանը: Սփյուռքահայ գրողներից կարելի է նշել՝ Վահե Վահյանին, Մուշեղ Իշխանին, Վիլյամ Սարոյանին:

Գրականության մասին խոսել կարելի հատկապես կարևորել պատմության և Գրականություն առարկաների միջառարկայական կապերը: Կարող ենք համադրություններ և քննարկումներ կատարել:

Կինո և թատրոն: 1960-70-ականների բուռն զարգացում ապրեցին կինոն և թատրոնը: Նկարահանվեցին ֆիլմեր «Անահիտ», «Նռան գույնը», «Տղամարդիկ», «Նահապետ», «Տժվժիկ», «Ոսկե ցլիկ», «Մենք ենք մեր սարերը», «Եռանկյունի», «01-99» և այլ ֆիլմեր որոնք կարելի է հետքրքրությամբ դիտել նաև այսօր[13]: Կինոն և թատրոնը ուսումնասիրելիս պետք է օգտագործել այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք կնպաստեն տեսողական և լսողական զարգացմանը: Կինոյի և թատրոնի ուսումնասիրման համար մեզ կօգնեն էլեկտրոնային գրատախտակները ,վիրտուալ թատերական ներկայացումները, ֆիլմերի դիտումները: Էլեկտրոնային գրատախտակի առկայության դեպքում ֆիլմի դիտում կազմակերպելը շատ հետաքրքիր և ուսուցողական կլինի իսկ եթե սմարթ գրատախտակ չկա,կարող ենք ֆիլմը դիտել համակարգչով: Կինոդասը կարող է լինել տարբեր, օրինակ Կարող ենք բերել նշված ֆիլմերից յուրաքանչյուրը և դասարանի համար կազմակեպել ֆիլմի դիտման հրաշալի դաս: Միջառարկայական կապերի ստեղծմամբ դասն ամրապնդելու

[12] Հայոց պատմություն, 9–րդ դաս. դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար, Է. Գևորգյան, Կ. Խաչատրյան, Ա. Վիրաբյան, Երևան, Զանգակ հրատարակչություն, 2019, մաս 2, էջ 143-144 :

[13] Հայկական կինո, https://bit.ly/2Yd9rBn, (Առցանց հասանելի է 12.05.2020):

համար կարելի է զուգահեռ հանձնարարել կարդալ Հրանտ Մաթևոսյանի «Մենք ենք մեր սարերը», իսկ հետո դիտել ռեժիսոր՝ Հենրիկ Մալյանի ֆիլմը: Ինչպես նաև կարելի է հանձնարարաել տանը դիտել ֆիլմը իսկ հետո դասարանում կազմակերպել քննարկում: Թատրոնի բնագավառում հայտնի և աչքի ընկնող ներկայացումներից էին Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգության բեմադրությունը, Գուրգեն Բորյանի «Բարձունքներում» դրաման[14]: Նշենք նաև որ բեմարվեստում հայտնվեցին շատ ներկայացուցիչներ՝ Վարդան Աճեմյանը, Արուս Ասրյանը, Թաթիկ Սարյանը և այլոք: Կինոյի և թատրոնի մասին կարելի է խոսել դասն անցկացնելով վիրտուալ թատերական ներկայացումներ դիտելիս: Այսօր շատ թատրոններ օնլայն հարթակում հասանելի են և հիանալի հնարավորություն են ընձեռնում մեզ:

Կերպարվեստը: Հետպատերազմյան տարիներին զարգացավ նաև կերպարվեստը՝ նոր շունչ հաղորդելով մշակույթին: Առավել նորովի ներկյացավ Մարտիրոս Սարյանը բնության պատկերներով յուրատեսակ նատյուրմորտներով: Սարյանը նորագույն շրջանի հայկական գեղանկարչության ազգային դպրոցի հիմնադիրն է[15]: Արդիականությամբ տոգորված նրա արվեստը հայ բազմադարյան մշակույթի (կերպարվեստ, ճարտարապետություն, դեկորատիվ-կիրսական արվեստ) հատկանշական գծերը կամրջել է նորօրյա խնդիրներին՝ ստեղծելով ձևով ու բովանդակությամբ նոր, հումանիստական, «սարյանական» արվեստ, ուր գույնի, գծի, կոմպոզիցիայի, գեղանկարչական ժանրերի սահմաններն ընդլայնվել են ամբողջ լայնքով ու խորքով: Նա սկսում է այցելել Հայաստանի շրջաններ և ստեղծում է բազմաթիվ բնանկարներ՝ Դվինում (1952), Սևանում (1953), Լուռիում (1952), Բյուրականում (1957-1958): Այս ժամանակաշրջանի նկարները Սարյանը հավաքում է «Իմ հայրենիքը» ցիկլի մեջ, ինչի շնորհիվ արժանանում է Լենինյան մրցանակի: Այդ նկարներից մեկն էր՝ «Արարատը Դվինից» բնանկարը:

Թեմատիկ պատկերարվեստի գործում նշանակալից էր Հովհաննես Զարդարյանի ներդրումը նրա գործերից էր «Նախաշավիղ» կտավը: 1950-ականների կերպարվեստի մեջ վառ ներկայացուցիչներից էին Սարգիս Մուրադյանն («Կոմիտասի վերջին գիշերը») ու Գրիգոր Խանջյանը («Իմ ժողովրդի պատմության տարեթվերից» նկարաշարը «Հայոց այբուբեն», «Վարդանանք» գոբելեն նկարները): Գե-

[14] Սիմոնյան Հ.,, էջ 698-699:
[15] Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան https://bit.ly/2Yfoo5W (Առցանց հասանելի է 09.05.2020):

ղանկարչության կարկառուն ներկայացուցիչներից էր Մինաս Ավետիսյանը: Նա բազմաժանր նկարիչ է: Նա ստեղծել է 20 ինքնատիպ որմնանկարնե: Նրա գեղանկարչության արմատները ձգվում են դեպի հայկական մանրանկարչությունը[16]:

Թեև նկարչի հասուն ստեղծագործական կյանքը տևել է ընդամենը 15 տարի՝ 1960-1975 թթ., բայց նա անջնջելի հետք է թողել հայ գեղանկարչության պատմության մեջ: Հայրենի Ջաջուռում 2005 թվականից վերաբացվել է Մինասի Տուն-թանգարանը, որը փլվել էր 1988 թվականի ավերիչ երկրաշարժի հետևանքով: Մինչև 2008 թվականը թանգարանում ցուցադրվում էին բացառապես կրկնօրինակներ: 2008 թվականին թանգարանում բացվեց նկարչի բնօրինակների ցուցադրությունը՝ շուրջ 30 կտավ, որն ամենամեծաքանակն է Հայաստանում:

Մինասի նկարները ցուցադրվում են նաև Հայաստանի Ազգային Պատկերասրահում, Երևանի Ժամանակակից արվեստի թանգարանում, Մոսկվայի Արևելքի երկրների արվեստի թանգարանում, Ռուսաստանի պատկերասրահներում, Հայաստանի, Լիբանանի, Սիրիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ–ի և այլ երկրների մասնավոր հավաքածուներում, և նկարչի ընտանիքի հավաքածուում: Նրա որմնանկարները «Ջաջուռ», «Ծնողներս», «Սպասում», «Ընկերուհիները» բացահայտում են կյանքն իր հավերժական գույներով: Նրա վրձնին են պատկանում շուրջ 20 կտավներ:

Կերպարվեստը աշակերտներին վառ ու պատկերավոր հաղորդելու համար մեզ կօգնեն վիրտուալ էքսկուրսիաները դեպի Հայաստանի պատմության թանգարան, Հայաստանի ազգային պատկերասրահ, Մարտիրոս Սարյանի տուն թանգարան և այլ թանգարաններ: Իհարկե կարելի է սլայդների տեսքով բերել Մինաս Ավետիսյանի, Մարտիրոս Սարյանի և մյուս գործիչների նկարները:

Ճարտարապետությունը և քանդակագործությունը: Ճարտարապետությունը և քանդակագործությունը ներկայացնելիս կարելի է խոսել վիրտուալ շրջայցերով ու սլայդներով: Դասի ընթացքում կարելի է միասին վիրտուալ տեղափոխվել և հեռակա ուսումնասիրել ժամանակաշրջանի համալիրները, կառույցները և թանգարանները: Այս շրջանի հետաքրքիր համալիրներից ու կառույցներից են Երևանի Հանրապետության հրապարակի ճարտարապետկան համալիրը, «Արմենիա հյուրանոցը», Կառավարական տունը, Մարզահամերգային համալիրը, Սարդարապատի

[16] Հայ Ժողովրդի Պատմություն, Հ. 8, ՀՍՍՀ ԳԱ ՊԻ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1970, էջ 474-475:

հերոսամարտի հուշահամալիրը, Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը, «Մայր Հայաստան» հուշարձանը[17]:

Ծիծեռնակաբերդը Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրն է, կառուցված է Երևանում՝ Ծիծեռնակաբերդ բլրի վրա: Հեղինակն է քանդակագործ Վան Խաչատրյանը, ճարտարապետ Արթուր Թարխանյանը (Սաշուր Քալաշյանի համահեղինակությամբ): Հուշահամալիրը կառուցվեց ռեկորդային արագությամբ՝ երկու տարում: Հուշարձանի շինարարությունն ավարտվեց 1967-ին, և հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1967 թ. նոյեմբերի 29-ին: Հանրապետության ղեկավարությունը ՀԿԿ Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանի գլխավորությամբ այցելեց Ծիծեռնակաբերդ, ծաղկեպսակ դրվեց հուշարձանին, տեղի ունեցավ միտինգ, որից հետո Անտոն Քոչինյանը վառեց հուշարձանի անմար կրակը[18]:

Կարեն Դեմիրճյանի անվ. մարզահամերգային Համալիր-Երևանում գտնվող ամենամեծ մարզահամերգային համալիրն է: Գտնվում է Ծիծեռնակաբերդի բլրի վրա՝ Երևանի արևմտյան մասում՝ Հրազդան գետի մոտ: Համալիրը բաղկացած է 2 մեծ սրահներից՝ սպորտային և համերգային: Համալիրը բացվել է 1983 թ.-ին, սակայն ստիպված էր փակել մեկ ու կես տարի հետո, 1985 թ.-ին եղած հրդեհից հետո: Վերանորոգման գործընթացը տեղի է ունեցել մինչև 1987թ. վերջը, երբ կրկին պատրաստվում էր հյուրընկալել համերգներ և մարզական միջոցառումներ: Համալիրը մշակվել է մի խումբ հայ ճարտարապետների՝ Կ. Հակոբյանի, Ա. Թարխանյանի, Ս. Խաչիկյանի, Հ. Պողոսյանի և Գ. Մուշեղյանի, ինժեներ կոնստրուկտորներ՝ Ի. Ծատուրյանի, Գ. Ազիզյանի, ինժեներ տեխնոլոգ Մ. Ահարոնյանի կողմից:

Սարդարապատ հուշահամալիր- Սարդարապատի ճակատամարտի վայրում կանգնեցված ճարտարապետական-քանդակագործական համալիր, հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, որը նվիրված է 1918 թվականին թուրքական կանոնավոր բանակի նկատմամբ հայ ժողովրդի տարած հաղթանակին: 1918 թվականին Արմավիր քաղաքի անունը Սար-

[17] Սիմոնյան Հ., էջ 701:

[18] Григорян А. Г., Товмасян М. Л.. Архитектура Советской Армении, Architecture of the Soviet Armenia, Стройиздат, Москва, 1986, с. 180-181.

դարապատ էր, որի հետ էլ կապված է հուշահամալիրի անվանումը: Համալիրի հանդիսավոր բացումը կատարվել է 1968 թվականի մայիսին[19]:

Քանդակագործությունը ևս լայն զարգացում ստացավ հայտնի գործերից էին Երվանդ Քոչարի «Սասունցի Դավիթ», Արտաշես Հովսեփյանի «Ալեքսանդր Թամանյան», Նիկողայոս Նիկողոսյանի «Միքայել Նալբանդյան» մոնումենտալ ստեղծագործությունները որոնք գեղեցկացրին Երևանի փողոցները: Քանդակագործության ուսումնասիրման համար շատ արդյունավետ է վիրտուալ այցելել Երվանդի Քոչարի թանգարան[20] :

Երաժշտությունը: Հետպատերազմյան տարիներին որակապես նոր աստիճանի է բարձրացել կատարողական արվեստը, ստեղծվել են թե դասական, թե էստրադային, ջազ, այլ ոլորտների բազմաբնույթ ստեղծագործություններ: Թեև գաղափարական ներգործությունը դեռ ուժեղ էր, այնուամենայնիվ՝ հայկական երաժշտությունը պահպանում է իր դարավոր ժողովրդական ավանդույթները՝ համադրելով դրանք արդիականության նոր շնչի հետ:1960-70-ականների օպերայի և բալետի թատրոնի խաղացանկը հարստացել է հետաքրքիր բեմադրություններով:

Հատուկ տեղ են գրավել ազգային օպերային և բալետային նոր ներկայացումները, ժամանակակից երաժշտական ստեղծագործությունները, հատուկ տեղ են գրավել ազգային օպերային և բալետային նոր ներկայացումները, ժամանակակից երաժշտական ստեղծագործությունները: 1970-ականներինն նշանակալի առաջընթաց է ապրել էստրադային երաժշտությունը: Հայաստանի էստրադային նվագախմբում շարունակվում են ժամանակակից ջազի, էստրադային երաժշտության և ազգային երաժշտական նյութի օրգանական միաձուլման որոնումները: Հայկական էստրադային երաժշտության նոր ոճի հաստատման մեջ վճռական նշանակություն են ունեցել Ա. Բաբաջանյանի, Կ. Օրբելյանի, Ռ. Ամիրխանյանի, Է. Բաղդասարյանի, Ա. Աճեմյանի, Մ. Վարդազարյանի, Մ. Մավիսակալյանի, Մ. Շաքարյանի, Արամ Սաթյանի, Ռ. Գալստյանի և այլոց երգերն ու գործիքային պիեսները[21]: 1960-ականների վերջին հյաստանում հայտնվել է նաև ռոք երաժտությունը: Երևանում,

[19]Միքայելյան Լ., Ակնարկ Խորհրդային Հայաստանի գիտության զարգացման վերաբերյալ (1945-1965թթ.), Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու ,2007, թիվ 1, էջ 183-184:

[20] Երվանդ Քոչարի թանգարան https://bit.ly/2YaWDvw (Առցանց հասանելի է 13.05.2020):

[21] Սովետահայ երաժշտություն (1921-1991թթ), https://bit.ly/2ARQefI (Առցանց հասանելի է 16.05.2020):

Լենինականում և Կիրովականում գործում էին համամիութենական մակարդակի մեծաթիվ ռոք-խմբեր և կատարողներ: Երաժշտության ներկայացման համար արդյունավետ է երաժշտական կատարումներ լսելը և վիրտուալ համերգային կատարումներին մասնակցելը:

Օրվա դասի պլան

Առարկա- Հայոց պատմություն

Դասարան- IX

Թեմա-Խորհրդային Հայաստանի մշակույթը հետպատերազմյան տարիներին

Ժամաքանակ- 2 ժամ

Նպատակ- Իմանալ Խորհրդային Հայաստանի հետպատերազմյան տարիների մշակութային գործիչներին, տարբերակել նրանց նշանավոր գործերը:

Կարողանալ ներկայացնել ժամանակաշրջանի նշանակությունը, յուրահատկությունները, նշանավոր գործերի մասին հետաքրքիր փաստերը:

Խնդիր- Զևավորել անհատական և խմբերով աշխատելու, սեփական կարծիք արտահայտելու կարողություններ:

Մեթոդներ- Վիրտուալ տեխնոլոգիաների, զրույցի, քննարկման, հարց ու պատասխանի, կինոդիտման, մտագրոհ :

Միջոցներ- Համակարգիչ, պրոեկտոր, գրատախտակ, նկարներ , տեսանյութեր

Դասի պլան- Համակցված դաս

Դասի կառուցվածքը- ա) կազմակերպչական մաս

բ) նյութի հաղորդում

Վիրտուալ այցերի միջոցով միջոցով այցելել Հայաստանի պատմության թանգարան, Հայաստանի ազգային պատկերասրահ, աշակերտներին ներկայացնել Խորհրդային Հայաստանի հետպատերազմյան շրջանի հայտնի գործիչների կյանքը և գործունեությունը:

Խթանում- Զրույցի և քննարկման միջոցով հարցնել թե ինչ նոր և հետաքրքիր տեղեկություններ ստացան թեմայի վերաբերյալ:

Իմաստի ընկալում – Դասախոսության կինոդիտման սլայդների մեթոդով ներկայացնել ժամանակաշրջանի գործիչներին և նրանց գործերը:

Կշռադատում- Կիրառելով մտագրոհի մեթոդը պարզել, թե աշակերտները որքանով են ընկալել նյութը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով թեման կարող ենք գալ հետևյալ եզրակացություններին.՝

1. «Խորհրդային Հայաստանի մշակույթը հետպատերազմյան տարիներին» թեմայի ուսումնասիրման ընթացքում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը ավելի մատչելի է դարձնում թեմայի լավ յուրացումը, նաև հնարավորություն է տալիս վառ ու պատկերավոր դարձնել ուսումնասիրվող նյութը աշակետների համար:
2. Հետպատերազմյան շրջանի մշակութային գլուխգործոցների, քանդակների, ճարտարապետական կոթողների, ֆիլմերի և թատերական ներկայացումների ուսումնասիրումն ու դիտումը ժամանակակից տեխնոլոգիաների օգնությամբ թույլ են տալիս բարձրացնել ուսուցման որակը, նպաստել աշակերտների ստեղծագործական զարգացմանը, կազմակերպել ավելի հետաքրքիր դաս:
3. Վիրտուալ շրջայց-էքսկուրսիաները թանգարաններ, օնլայն խաղերի կազմակերպումը, ֆիլմեր դիտելը, վիրտուալ ցուցահանդեսներին հետևելը նրանց հնարավորություն կտա տեղափոխվել տվյալ ժամանակաշրջան և ավելի մոտիկից ուսումնասիրել նյութը, տեսնել նկարներ, իրեր, որոնք նոր հետաքրքրություն կարթնացնեն աշակերտների մեջ:
4. Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը ուսուցչի կողմից կարող է նպաստել սեր և հետաքրքրություն առաջացնել դեպի պատմության դասերը, դեպի մշակույթը, արվեստը և դեպի գեղեցիկը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԳՐՔԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայոց պատմություն, 9–րդ դաս. դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար, Է. Գևորգյան, Կ. Խաչատրյան, Ա. Վիրաբյան, Զանգակ հրատարակչություն, Երևան, 2019, մաս 2, 196 էջ:
2. Հայոց պատմություն, Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը Մ. Ա. Կատվալյան, Պ. Հ. Հովհաննիսյան, Է. Գ. Մինասյան, Բուհական դասագիրք, խմբ.՝ Հ. Սիմոնյան, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 874 էջ:
3. Հայոց պատմություն, Նորագույն ժամանակաշրջան (1945-1991թթ.), խմբ. Վ. Բարխուդարյան և ուրիշ., Հ. 4, Գիրք II, Զանգակ հրատ., Երևան, 2016, 700 էջ:
4. Հայ Ժողովրդի Պատմություն, Հ. 8, ՀՍՍՀ ԳԱ ՊԻ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1970, 544 էջ:
5. Ղևոնդյան Հ., Պատմության դասավանդման մեթոդիկա, Մանկավարժ հրատ., Երևան, 2001, 262 էջ:
6. Никулина Н.Ю., Методика преподавания истории в средней школе: Учебное пособие, Калинингр. ун-т., Калининград, 2000, 95 с.
7. Глазырина Т.Н., Методика преподавания истории: учеб.-метод. комплекс для студентов специальности История, ПГУ, Новополоцк, 2011, 356 с.
8. Григорян А.Г., Товмасян М.Л., Архитектура Советской Армении. Architecture of the Soviet Armenia, Стройиздат, Москва, 1986, 319 с.

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Միքայելյան Լ., Ակնարկ Խորհրդային Հայաստանի գիտության զարգացման վերաբերյալ (1945-1965թթ.), Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1, 2007, էջ 177-184:

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐ

1. Հայաստանի ազգային պատկերասրահի կայք- Այցելություններ/ցուցահանդեսներ https://bit.ly/37JJYCX (Առցանց հասանելի է 06.05.2020):

2. Հայաստանի պատմության թանգարանի կայք, Քարտեզ և վիրտուալ շրջայց https://bit.ly/2YeOLcz (Առցանց հասանելի է 06.05.2020):
3. Երվանդ Քոչարի թանգարանի կայք https://bit.ly/2YaWDvw (Առցանց հասանելի է 13.05.2020):
4. Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի կայք https://bit.ly/2Yfoo5W (Առցանց հասանելի է 09.06.2020):
5. Cinema.am կայք, Հայկական կինո https://bit.ly/2Yd9rBn (Առցանց հասանելի է 12.05.2020):
6. Hetq.am կայք, Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները կրթության մեջ https://bit.ly/3efiOWN (Առցանց հասանելի է 06.05.2020):
7. Ittrend.am կայք, Վիրտուալ էքսկուրսիաներ https://bit.ly/3dlwcaZ (Առցանց հասանելի է 06.05.2020):
8. Ost Armenia կայք, Սովետահայ երաժշտություն (1921-1991թթ.) https://bit.ly-/2ARQefI (Առցանց հասանելի է 16.05.2020):

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ I

Մինաս Ավետիսյան «Ջաջուռ» 1960թ. -Վերցված է armhistory.do.am կայքից, (https://bit.ly/3fDBuzX)

Առցանց հասանելի է 02.06.2020

ՀԱՎԵԼՎԱԾ II

Մարտիրոս Սարյան «Արարատը Դվինից»- Վերցված է regnum.ru կայքից (https://bit.ly/2N9mXzZ) - Առցանց հասանելի է 02.06.2020

ՀԱՎԵԼՎԱԾ III

Մարզահամերգային Համալիր – Վերցված է barev armenia.com կայքից (https://bit.ly/3hG0DvA) - Առցանց հասանելի է 02.06.2020

ՀԱՎԵԼՎԱԾ IV

Ծիծեռնակաբերդ հուշահամալիր – Վերցված է armeniadiscovery.com կայքից, Armenian Genocide museum (https://bit.ly/2N8bTmn) - Առցանց հասանելի է 02.06.2020

ՀԱՎԵԼՎԱԾ V

Սարդարապատի հուշահամալիր- Վերցված է Citycentre.am կայքից (https://bit.ly/37HZWh) Առցանց հասանելի է 02.06.2020

ՀԱՎԵԼՎԱԾ VI

Երվանդ Քոչար «Սասունցի Դավիթ» արձան ,տեղադրվել է 1959 թվականին- Վերցված է barevarmenia.com կայքից ,Սասունցի դավթի արձան (https://bit.ly/2BoJINm) -Առցանց հասանելի է 03.06.2020

ՀԱՎԵԼՎԱԾ VII



Սերգեյ Փարաջանով «Նռան գույնը» Վերցված է Tert.am կայքից (https://bit.ly/30Zrjl9) -Առցանց հասանելի 03.06.2020

ՀԱՎԵԼՎԱԾ VIII



«Մենք ենք մեր սարերը» ֆիլմից դրվագ Վերցված է blog.times.am կայքից , Մենք ենք մեր սարերը
(https://bit.ly/3dcUrYD) –Առցանց հասանելի է 03.06.2020

ՀԱՎԵԼՎԱԾ IX

Մայր Հայաստան հուշահամալիր – Վերցված է armeniadiscovery.com կայքից, Մայր Հայաստան
(https://bit.ly/3deiuqb) Առցանց հասանելի է 07.06.2020

ՀԱՎԵԼՎԱԾ X



Մինաս Ավետիսյան «Ձմերուկով նատյուրմորտ». Վերցված է nicolasjv.blogspot.com կայքից, Art Sunday- Minas Avetisyan (https://bit.ly/30SWK0w) Առցանց հասանելի է 07.06.2020

ՀԱՎԵԼՎԱԾ XI

Մինաս Ավետիսյան «Լամպով Կինը» 1969- Վերցված է armhistory.do.am կայքից, Մինաս Ավետիսյան (https://bit.ly/2NglGa1) Առցանց հասանելի է 07.06.2020

ՀԱՎԵԼՎԱԾ XII

«Տժվժիկ» ֆիլմից -Վերցված է matyan.am կայքից, (https://bit.ly/2UTdaSI) Առցանց հասանելի է 08.06.2020

ՀԱՎԵԼՎԱԾ XIII

«01- 99 »Ֆիլմից - Վերցված է www.frunzik.com կայքից, Короткометражный фильм "01-99" (https://bit.ly/37I17wX) Առցանց հասանելի է 08.06.2020